

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԻ**

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Նպատակներն ու խնդիրները

- 1.1. Հայաստանի պետական ագրարային համալսարանի /ՀՊԱՀ/ ուսանողական խորհուրդը (Այսուհետև՝ խորհուրդ) ուսանողների ինքնակառավարման, ներկայացուցչական, ընտրովի բարձրագույն մարմին է:
- 1.2. Ուսանողական խորհուրդը արտահայտում և պաշտպանում է ուսանողների սոցիալական և իրավական շահերը, նպաստում ուսումնակրթական հիմնահարցերի լուծմանը, ուսանողական ինքնակառավարման ծավալմանը, ուսանողության հոգևոր զարգացմանը, ազատ ժամանցի, հանգստի, մշակութային և մարզական կյանքի կազմակերպմանը:
- 1.3. Ստեղծում է կապեր հանրապետության և արտասահմանյան ԲՈՒՀ-երի միջև:
- 1.4. Ուսանողական խորհուրդն իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում է ՀՀ սահմանադրությամբ, գործող օրենսդրությամբ, ՀՊԱՀ-ի կանոնադրությամբ և սույն կանոնակարգով:
- 1.5. Խորհրդի կանոնակարգը և դրանում կատարվող փոփոխություններն ու լրացումները հաստատվում են ՀՊԱՀ գիտական խորհրդի կողմից:
- 1.6. Խորհրդի հարաբերությունները ՀՊԱՀ ղեկավար մարմինների հետ կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, ՀՊԱՀ կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և ՀՊԱՀ ռեկտորատի, գիտական խորհրդի և խորհրդի համապատասխան որոշումներով:
- 1.7. Խորհուրդն իր խնդիրների լուծման համար համագործակցում է ՀՊԱՀ ամբիոնների, արհմիության, Ուսանողական գիտական ընկերության և այլ ստորաբաժանումների հետ:
- 1.8. Ուսանողական խորհուրդը իր փոխադարձակամություններն այլ կազմակերպությունների հետ կառուցում է պայմանագրային սկզբունքով՝ համագործակցության և փոխշահավետության հիման վրա:

- 1.9. Խորհրդի անվանումն է. հայերեն՝ Ուսանողական խորհուրդ, ռուսերեն՝ Студенческий Совет, անգլերեն՝ Student Council, կարճ անվանումն է. հայերեն ՌԽ, ռուսերեն՝ СС, անգլերեն՝ SU:

2. Գործունեությունը

Ուսանողական խորհուրդը.

- 2.1. Իր գործունեությունը կազմակերպում է ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության, հրապարակայնության, փոխադարձ հարգանքի և համագործակցության վրա:
- 2.2. Ծավալում է լայն ինքնավարություն, ստեղծում ինքնակառավարման գործուն մեխանիզմներ, իրականացնում ընդհանուր կանոնադրական հսկողություն, մշակում և կնքում փոխշահավետ պայմանագրեր արտերկրի գյուղատնտեսական և այլ գիտական, ուսումնական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների հետ:
- 2.3. Իր հետաքրքրությունների շրջանակներում ուսումնասիրում, մշակում և վերլուծում է ուսանողական կյանքի տարբեր խնդիրներ, ԲՈՒՀ-ի գիտական խորհրդին, ռեկտորատին, իշխանության պետական մարմիններին ներկայացնում առաջարկներ, տարբեր որոշումների և օրինագծերի նախագծեր, նպաստում նրանց ընդունմանն և հետևողական իրականացմանը:
- 2.4. ՀՀ օրենսդրության շրջանակներում կարող է իրականացնել տնտեսական, բարեգործական գործունեություն, ձեռք բերել և տնօրինել նյութական միջոցներ:

3. Կառուցվածքը

- 3.1. Ուսանողական խորհրդի բարձրագույն մարմինը ուսանողների ներկայացուցիչների ընդհանուր Ժողովն (այսուհետև ժողով) է, որը ձևավորվում է ներկայացուցչական սկզբունքով՝ ցերեկային ուսուցման 20 ուսանողներից ընտրվում է մեկ պատվիրակ, հեռակա ուսուցման 100 ուսանողներից՝ մեկ պատվիրակ և հրավիրվում երկու տարին մեկ անգամ: Ժողովն իրավասու է, եթե ներկա են պատգամավորների 2/3-ից ավելին: Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ: Կոնֆերանսը.

ա) քննարկում և հաստատում է ուսանողական խորհրդի նախագահության, հանձնաժողովների աշխատանքների հաշվետվությունները, գնահատում նրանց կատարած աշխատանքը,

բ) պատգամավորների ընդհանուր թվի ձայների 2/3-ով գնահատում նրանց կատարած աշխատանքները,

գ) փակ գաղտնի քվեարկությամբ ընտրում է ուսանողական խորհրդի նախագահություն, նախագահ և տեղակալներ, հանձնաժողովների նախագահներ: Ընտրությունը համարվում է կայացած, եթե կողմ են քվեարկել մասնակիցների կեսից ավելին:

3.2. Ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում աշխատանքային գործունեությունը իրականացվում է ուսանողական խորհրդի նախագահությունը, որը նիստեր է գումարում երկու շաբաթը մեկ անգամ: Նրա թվակազմը սահմանում է Ժողովը:

3.3. Ներկայացուցչական մարմինը ձևավորվում է համամասնության սկզբունքով՝ ցերեկային ուսուցման 100 ուսանողներից նախագահության մեկ անդամ, իսկ հեռակա ուսուցման 500 ուսանողներից՝ մեկ անդամ: Ֆակուլտետային Ուսանողական խորհուրդները նախապես ներկայացնում են Ներկայացուցչական մարմնի անդամների թեկնածուների համամասնական ցուցակը:

3.4. Ուսանողական խորհրդի նախագահության նիստը համարվում է օրինական, եթե ներկա են անդամների 2/3-ից ավելին, որոշումները կայացած են, եթե կողմ են քվեարկել ներկա անդամների կեսից ավելին:

3.5. Ուսանողական խորհրդի նախագահությունը

ա) նախապատրաստում և հրավիրում է ուսանողական խորհրդի կոնֆերանսները, ժողովները, նիստերը, հետամուտ լինում նրանց որոշումների կենսագործմանը, քննարկում ընթացիկ հարցեր,

բ) ներկայացնում է ԲՈՒՀ-ի ուսանողական խորհուրդը,

գ) համակարգում է կուրսերի, ֆակուլտետների և հանրակացարանների ուսանողական խորհուրդների գործունեությունը,

դ) առաջարկում է թեկնածուներ ԲՈՒՀ-ի ստորաբաժանումների և կառույցների կազմում,

ե) կապեր է հաստատում ուսանողական, երիտասարդական կազմակերպությունների և շարժումների հետ,

- զ) ամփոփում և վերլուծում է ուսանողների ընթացիկ առաջադիմությունը, ուսումնական կարգապահության վիճակը, ներկայացնում անվանական կրթաթոշակների թեկնածուներ,
- է) կազմակերպում և անցկացնում է գիտական կոնֆերանսներ, ստուգատես-մրցույթներ, փառատոններ, հանդիպումներ, երեկոներ:

3.6. Ուսանողական խորհրդի նախագահը

- ա) վարում է խորհրդի և նախագահության նիստերը, խորհուրդը ներկայացնում է համալսարանի վարչական մարմիններում, տարբեր կազմակերպություններում, հանդես գալիս նախագահության գործունեության մասին հաշվետվությամբ,
- բ) հանդիսանում է համալսարանի ռեկտորատի, գիտական խորհրդի և խորհրդի անդամ:
- գ) համակարգում է ֆակուլտետային Ուսանողական խորհուրդների աշխատանքները,
- դ) ներկայացնում է ՀՊԱՀ Ուսանողական խորհուրդը
- ե) Նախագահությանն ներկայացնում է թեկնածուներ Խորհրդի պատվավոր անդամ շնորհելու համար:

3.7. Համալսարանի ֆակուլտետներում ընտրում է ուսանողական խորհրդի նախագահություն և նախագահ, կուրսերում՝ նախագահ, ժողովների կողմից, մագիստրատուրայում՝ մագիստրանտների խորհուրդ և նախագահ:

3.8. Փոխնախագահը կատարում է նախագահի հանձնարարականները: Նախագահի բացակայության դեպքում փոխնախագահն է համակարգում Խորհրդի բոլոր աշխատանքները:

3.9. Քարտուղարը համակարգում է քարտուղարության աշխատանքը: Քարտուղարի բացակայության դեպքում քարտուղարության աշխատանքները համակարգում է Խորհրդի նախագահը:

3.10. Ժողովը իրավասու է, եթե մասնակցում է ուսանողների կեսից ավելին:

3.11. Ընտրությունը համարվում է կայացած, եթե կողմ են քվեարկել մասնակիցների կեսից ավելին:

3.12. Հանրակացարանի ուսանողական խորհրդի նախագահն ընտրվում է հանրակացարանաբնակ ուսանողների ժողովի կողմից: Ժողովն իրավասու է, եթե նրան մասնակցում են հանրակացարանում բնակվող ուսանողների կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

3.13. Սույն կանոնակարգով չնախատեսված և դրանում չընդգրկված այլ հարցերը կանոնակարգվում են ՀՊԱՀ կանոնադրությամբ և Խորհրդի որոշումներով:

4. Ուսանողական խորհրդի դադարեցման կարգը

4.1. Ուսանողական խորհուրդը իր գործունեությունը դադարեցնում է կոնֆերանսի որոշմամբ՝ ձայների ընդհանուր թվի 2/3-ի կողմ քվեարկելու դեպքում:

4.2. Խորհրդի լուծարումից հետո նրա ամբողջ գույքը և այլ միջոցները պատկանում են ՀՊԱՀ-ին: